ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 41-Լ

«16» 01 2023 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ «ԴԱՏԱԽԱԶԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ» ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի ուժի մեջ մտնելով պայմանավորված, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում «Դատախազի աշխատանքի մասին» կիսամյակային և տարեկան վիճակագրական հաշվետվության կազմման և վարման, հաշվետվության նոր ձևի լրացման ու ներկայացման վերաբերյալ նոր իրավակարգավորումների սահմանման անհրաժեշտությունը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազության համակարգում «Դատախազի աշխատանքի մասին» կիսամյակային և տարեկան վիճակագրական հաշվետվության կազմման և ներկայացման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազության համակարգում «Դատախազի աշխատանքի մասին» կիսամյակային և տարեկան վիճակագրական հաշվետվությունների ձևերը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սահմանել, որ մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը հարուցված, ինչպես նաև դատարան ուղարկված այն քրեական գործերով, որոնցով մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը կայացվել է դատական քննություն նշանակելու մասին որոշում, Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազության համակարգում «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվությունը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի «Հայաստանի Հանրապետության դատախազությունում դատախազի աշխատանքի մասին վիճակագրական հաշվետվության վարման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 77 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2020 թվականի հուլիսի 8-ի N 54 հրամանի N 1 և N 2 հավելվածներին համապատասխան:

4. Սահմանել, որ 2022 թվականի հուլիսի 1-ից հետո նախաձեռնված քրեական վարույթներով Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազության համակարգում «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվությունը ներկայացվում է սույն հրամանի N 1 և N 2 հավելվածներին համապատասխան:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

6. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազը:

7. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, ավագ դատախազներին, դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին, օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ